«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը <<Կերպարվեստի>> մեթոդիկայի ուսուցման գործընթացում

Հաստատություն՝ 112 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լիանա Բաբայան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. <<Կերպարվեստի>> ուսուցման դերը և նշանակությունը……5
2. <<Կերպարվեստի>> մեթոդիկայի ուսուցման գործընթացում մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման ուղիները……10

Եզրակացություն……19

Օգտագործված գրականության ցանկ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Արվեստի միջոցներով դաստիարակությունը սերտորեն կապված է մտավոր դաստիարակության հետ:

Թեմայի ընտրությունը և արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մանկության տարիներին գեղեցիկից ստացած վառ տպավորությունները երկար ժամանակ տպավորվում են հիշողության մեջ և ազդեցություն ունենում մարդու հետագա ճաշակի, հետաքրքրությունների, իսկ երբեմն էլ մասնագիտության ձևավորման վրա:

Կերպարվեստային գործունեությունը իր տեսակներով որպես անձի զարգացման միջոց ուսումնասիրման և հետազոտման հատուկ առարկա է:

Կերպարվեստային գործունեությունը երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է, որի ընթացքում ստեղծվում են բարենպաստ պայմաններ արվեստի հուզական, ընկալման, գեղագիտական զարգացման: Կերպարվեստի գործունեության տարբեր տեսակների՝ պարապմունքների, զրույցների և էքսկուրսիաների ժամանակ համակարգվում և ընդլայնվում են երեխաների ձեռք բերած գիտելիքները:

Կերպարվեստային պարապմունքների խնդիրները իրականացվում են նկարչության, ապլիկացիայի և կառուցողական նյութերի, ծեփակերտման պարապմունքների ընթացքում:

Կերպարվեստ պարապմունքները ունեն ճանաչողական և ուսուցողական նշանակություն:Կերպարվեստային գործունեության ընթացքում զարգանում են երեխայի ունակությունները,ինչպես նաև լուծվում են կարևորագույն խնդիրները՝ երեխաները սովորում են զգալ, տեսնել շրջապատող աշխարհը, հարստանում է զգայական փորձը, կարողանում են առարկաները տեսնել և բնութագրել ըստ գույնի, ձևի և չափի,սովորում են նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ և այլն:

Կերպարվեստային գործունեության միջոցով երեխաները սովորում են նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ, ծանոթանում են

լայնության,բարձրության և մեծության հարաբերակցության հետ::Կերպարվեստային գործունեությունը մեկ ուսումնական տարվա համար նախատեսվում է հետևյալ պարապմունքները՝ նկարչություն, ծեփակերտում, ապլիկացիա և կառուցողական աշխատանքներ:

Աշխատանքի նպատակը:

Մեր հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը <<Կերպարվեստի>> մեթոդիկայի ուսուցման գործընթացում:**

Աշխատանքի խնդիրները:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել կերպարվեստային գործունեության տեսակների ազդեցությունը նախադպրոցականի անձի ձևավորման վրա,
- ներկայացնել մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը <<Կերպարվեստի>> մեթոդիկայի ուսուցման գործընթացում:

Աշխատանքի տեսական հիմքը:

Սույն աշխատանքում արծարծված խնդիրները և հարցադրումները ուսումնասիրվել են մի շարք աղբյուրների հիման վրա: Թեմայի հետ կապված հարցերը ուսումնասիրվել են և Յու. Ամիրջանյանի, Դ. Ֆ., Սամոյլենկովի և այլոց աշխատություններում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքային տեքստը կազմում է 21 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. <<ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ>> ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստի ստեղծագործություններում պատկերված գործողությունը խտացած, կենտրոնացած է մեկ պահի մեջ, արտաքուստ ստատիկ է և չի զարգանում ժամանակի ու տարածության մեջ ինչպես թատերական արվեստում, պարարվեստում կամ երաժշտության մեջ, սակայն դա չի խանգարում գաղափարներ մտքեր ու ապրումներ արտահայտելուն՝ չկորցնելով մեծ արվեստի իր ուժը: Կերպարվեստը միավորում է՝ գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը[1]:

Ի տարբերություն տարածական արվեստների ոչ պատկերային տարատեսակների, կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում է դիտարկելի ակներև կերպարներ:

Կերպարվեստի ստեղծագործություններում պատկերված գործողությունը խտացած, կենտրոնացած է մեկ պահի մեջ, արտաքուստ ստատիկ է և չի զարգանում ժամանակի ու տարածության մեջ ինչպես թատերական արվեստում, պարարվեստում կամ երաժշտության մեջ, սակայն դա չի խանգարում գաղափարներ մտքեր ու ապրումներ արտահայտելուն՝չկորցնելով մեծ արվեստի իր ուժը:

Մանկապարտեզում կերպարվեստի դասավանդումը հիմնականում ծառայում է երեխայի զգայական և մտավոր ոլորտի, աշխատանքային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

[1]Ներսիսյան Լ. Ս., Ներսիսյան Ս. Մ., «Կերպարվեստ» օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար՝ 1-4 դաս., Երևան, 2008թ., էջ 14:

Անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը, ինչը հանդիսանում է նախադպրոցականի կրթության հիմնական նպատակը, անհնար է առանց արվեստի հետ նրա հաղորդակցության: Արվեստի տարբեր բնագավառների ուսումնասիրությունը նրբացնում է նրա ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու ցանկացած գործունեություն:

Անձի դաստիարակության-զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային գործունեությունը, նոր ուսումնական պլանի համաձայն, ինտեգրված է արվեստի ուսուցման հետ: Այս ինտեգրման հիմք է հանդիսանում կերպարվեստի ուսուցման մեջ կիրառական-դեկորատիվ արվեստի տարրերի ընդգրկումը: Առարկան դասավանդելիս՝ ուշադրությունը կենտրոնանում է տրամադրվածությունների, վերաբերմունքների, գործնական, ստեղծագործական և հետազոտական-որոնման կարողությունների և հմտությունների զարգացման և գիտելիքի կիրառման վրա:

Նախադպրոցականի գունազգացողության ձևավորման գործընթացում կերպարվեստի և կիրառական արվեստի նպատակն է.

- Երեխայի ընդգրկումը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ և այս ճանապարհով նրա մոտ գեղեցիկը զգալու և պատկերելու ունակության զարգացումը:
- Արվեստի նմուշներն ընկալելու ունակության ձևավորումը և այդ հողի վրա արվեստի նկատմամբ մշտական հետաքրքրության և սիրո սերմանումը:
- Արվեստի համընդհանուր լեզվի ուսանումը և դրա միջոցով ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցությունը, աշխարհի միասնականության զգացման ձևավորումը:
- Շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման և կարգավորման կարողությունների և հմտությունների մշակումը:
- Ստեղծագործական գործունեության տեխնիկական միջոցների տիրապետումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Արվեստի դասավանդման գործընթացում երևույթների իմաստավորման և հիմնախնդիրների մեջ ներթափանցման կարողության ձևավորմանը, քննադատական և ստեղծագործական գիտակցության զարգացմանը նպաստում են[2].

- երեխաների կողմից գեղարվեստական գաղափարների առաջադրումը,
- սեփական և այլոց ստեղծագործության բնութագրումը, գնահատումը և վերլուծությունը,
- այն դերի գիտակցումը, որ կատարում է ազգային և համաշխարհային մշակույթների ժառանգությունը տարբեր համատեքստում:

Արվեստ դասավանդելիս՝ հիմնախնդիրները լուծելու կարողության զարգացմանը նպաստում են.

- դասավանդման գործընթացում առաջացած գաղափարների իրացման փորձը,
- լավագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ նյութի, գործիքի, պատկերամիջոցների և տեխնիկայի ընտրությունը և արդյունավետ կիրառումը,
- առաջադրված խնդրի լուծման համար անհրաժեշտ նախաձեռնության և պատասխանատվության դրսևորումը,
- սթրեսի, հուսալքության և պարտության հաղթահարումը և առաջադրված նպատակին հասնելու հաստատուն ձգտումը:

Արվեստ դասավանդելու գործընթացում երեխայի ինքնադրսևորմանը (հայացքներ, գաղափարներ, կենսանախադրյալներ (տրամադրվածություններ), զգացմունքներ) նպաստում են.

1. տարբեր գեղարվեստական նյութի և միջոցների յուրացում-տիրապետումը,
2. գեղարվեստական ռեսուրսների (նյութի և մեթոդների) կապակցումը ինքնադրսևորման գործընթացի հետ,
3. խմբի երեխաների գեղարվեստական ստեղծագործություններում որոշակի հայացքների, գաղափարների, տրամադրությունների և զգացմունքների ճանաչումը և դրանց մասին դատողությունը,
4. սեփական գեղարվեստական աշխատանքում պատկերված հայացքների, գաղափարների, տրամադրությունների և զգացմունքների մասին դատողությունը:

[2]Ներսիսյան Լ. Ս., Ներսիսյան Ս. Մ., «Կերպարվեստ» օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար՝ 1-4 դաս., Երևան, 2008թ., էջ 21:

<<Կերպարվեստ>> առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջների ապահովումը և դրա հիմքում դրված գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման, բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գիտակցության ձևավորման, ինչպես նաև հոգևոր ու բարոյական մի շարք խնդիրների լուծման հաջողությունն էապես պայմանավորված է համապատասխան կերպարվեստային կրթություն ստացած և արհեստավարժ մանկավարժների գործունեությամբ:

Կերպարվեստը լայն հնարավորություններ ունի աճող սերնդի գեղագիտական դաստիարակության գործում: Աշխարհի ճանաչողությունը կերպարվեստի միջոցների՝ գծի, գույնի ու կերպարների օգնությամբ, երեխաներին թույլ է տալիս ընդհանրացնել իրենց տեսադաշտը և նկատել ու ընկալել հայրենի բնության գեղեցկությունը[3]: Սա է այն իրական և բնական միջավայրը, որը պարտավոր ենք ներկայացնել որպես հենք՝ գեղագիտական դաստիարակության խնդիրներն իրականացնելու համար: Դրանց լուծման զգալի մասը բաժին է ընկնում <<Կերպարվեստ>> առարկան դասավանդող ուսուցիչներին:

Ինչ վերաբերում է գործնական աշխատանքների և բանավոր հարցումների գնահատման մատենավարությանը, ապա նպատակահարմար է գործնական աշխատանքների գնահատականները գրանցել սյունակով, իսկ բանավոր հարցման արդյունքները՝ ցրված:

[3]Ներսիսյան Լ. Ս., Ներսիսյան Ս. Մ., «Կերպարվեստ» օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար՝ 1-4 դաս., Երևան, 2008թ., էջ 40:

Հարկ է նորից նշել, որ կերպարվեստի բոլոր պարապմունքներն էլ իրենց բնույթով գործնական են, և դաստիարակները հաճախ են երեխաների աշխատանքները գնահատում տետրերում։

ԳԼՈՒԽ 2. <<ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ>> ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Առաջնորդվելով առարկայական ծրագրով՝ դաստիարակները իրենք են կազմում դասընթացի թեմատիկ պլանավորումը՝ պահպանելով գործունեության ձևերի փոխկապակցվածությունն ու համամասնությունը: Ծրագրի կառուցվածքը թույլ է տալիս գործունեության տարբեր ձևերից առանձնացնել տվյալ խմբում սովորողների պատրաստվածությանն ու հնարավորություններին համապատասխան թեմատիկա:

Մանկապարտեզի դաստիարակին հնարավորություն է տրվում կազմել ինքնուրույն առաջադրանքներ, որոնք սակայն պետք է ներառեն հինգ կարևոր գործոնների միասնություն.

1. ուսումնական խնդիր (գույն, ձև, տարածություն),
2. աշխատանքի թեմա կամ պատկերվող օբյեկտ,
3. աշխատանքի տեսակ (բնօրինակից, թեմատիկ, ստեղծագործական և այլն),
4. նյութ,
5. տվյալ դասին ներկայացվող եզրույթների և հասկացությունների առկայություն:

Մեկ առաջադրանքի կատարման ընթացքում ընդհանուր առմամբ երեխայի առջև դրված մի քանի ուսումնական խնդիրներից ցանկալի է գոնե երկուսի լուծումը.

- տեսական գիտելիքների ձեռքբերում (ըստ թեմատիկայի),

- որոշակի հմտությունների ձեռքբերում՝ պայմանավորված գործնական աշխատանքի արդյունքով (ըստ առաջադրանքի բարդության):

Նախադպրոցականի գունազգացողության ձևավորման գործընթացում կերպարվեստի նպատակն է.

- Երեխայի ընդգրկումը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ և այս ճանապարհով նրա մոտ գեղեցիկը զգալու և պատկերելու ունակության զարգացումը:
- Արվեստի նմուշներն ընկալելու ունակության ձևավորումը և այդ հողի վրա արվեստի նկատմամբ մշտական հետաքրքրության և սիրո սերմանումը:
- Արվեստի համընդհանուր լեզվի ուսանումը և դրա միջոցով ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցությունը, աշխարհի միասնականության զգացման ձևավորումը[4]:
- Շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման և կարգավորման կարողությունների և հմտությունների մշակումը:
- Ստեղծագործական գործունեության տեխնիկական միջոցների տիրապետումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը:
- Համապատասխան արժեքների և վերաբերմունքների ձևավորում, արվեստի և աշխատանքային գործունեության հետ կապված կարողությունների և հմտությունների զարգացում և աշակերտներին անհրաժեշտ գիտելիքների հաղորդում, մասնավորապես.

1. Հարգանքի զգացողության զարգացում ազգային և համամարդկային մշակույթի, մարդու աշխատանքի նկատմամբ, սատարման և կարեկցանքի ունակության զարգացում, ներողամիտ վերաբերմունքի ձևավորում այլ մարդկանց, տարբերվող կարծիքի և աշխարհայացքների նկատմամբ:
2. Ստեղծագործական մտածողության և ընկալման ունակության զարգացում, զգայական ոլորտի զարգացում, երևակայության, ճաշակի և քննադատական մտածողության զարգացում, տեսադաշտի, տարածական պատկերացումների, զննելու ունակության, տեսողական հիշողության և ձեռքի շարժման զարգացում, աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորում,

[4]Հակոբյան Հ. Հ., Կերպարվեստ հայոց կրթարաններում: Երևան, «Գիտություն» 1996թ., էջ 21:

հաղորդակցական կարողությունների զարգացում, կերպարվեստում և կիրառական արվեստում գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերում:

3. Աշխարհի մասին պատկերացման ձևավորում, սեփական և այլոց մշակութային ժառանգությանը ծանոթացում, կերպարվեստի և կիրառական արվեստի լեզվի ուսանում:

Մանկապարտեզում արվեստի, որպես ուսումնա-դասիարակչական բնագավառի, մանկավարժական ներուժը սահմանում է նրա իրազննական-տարատեսակային բնույթը:

Ներկայացնենք դասի նմուշ.

Խումբը-<<Կրտսեր երկրորդ>>

Թեմա-Բնանկարչություն: Թեմատիկ աշխատանք՝ <<Եղանակներ>>

Նպատակը.

1. Հայրենի երկրի բնաշխարհի նկատմամբ սիրո, հետաքրքրության և հոգատարության ձևավորում:
2. Կերպարվեստի ժանրերի, ջրաներկի ճիշտ օգտագործման, գույների և երանգների մասին պատկերացման ձևավորում:
3. <<Տարվա եղանակները>> բեմականացման ներկայացում, միջառարկայական կապի ապահովում:

Կահավորումը-Տարվա տարբեր եղանակների բնապատկերներով նկարներ, գեղեցիկ ձևավորված ամանեղեն, սպասք, կահույք, գորգեր, խաղալիքներ, գործվածքեղեն, խեցեղեն, ջրաներկ, գունավոր մատիտներ, յուղամատիտներ, գունավոր կավիճներ, նկարչական ալբոմներ, մոլբերտներ (նկարելու համար հենարան) և այլն:

Մեթոդները - Պրիզմա, Պատկերասրահ:

Պարապմունքի համառոտ ընթացք

Երեխաները ներկայացնում են նախորդ պարապմունքերին անցած գիտելիքները կերպարվեստի ճյուղերի և ժանրերի մասին: Նշում են հիմնական և բաղադրյալ գույների մասին, առավել պատկերավոր և ուսանելի դարձնելու համար կիրառում են <<Պրիզմայի>> մեթոդները:

Կերպարվեստն ունի չորս հիմնական տեսակ՝ գունանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառական արվեստ: Կերպարվեստի տեսակները

հեշտությամբ կարելի է միմյանցից տարբերել իրենց կատարման նյութերով, գործիքներով, աշխատելաձևով:

Մանկապարտեզում փոքրերի 1-ին և 2-րդ խմբերում անցկացվող պարապմունքի հիմնական տեսակըմատիտով նկարչությունն է, ծանոթացումը մատիտանկարչությանը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԹԵՄԱՆ՝ <<ԲԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿ>>

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻՆ՝

Նախապես դաստիարակը երեխաների համար պատրաստում է 7 գույնով ծաղիկ: Աշխատանքը սկսելուց առաջ նախապատրաստում է անհրաժեշտ պարագաները, դիդակտիկ նյութերը, այնուհետ երեխաները սկսում են աշխատանքը:

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ՝ նախօրոք պատրաստված 7 գույնով ծաղիկ , բարությունը բնութագրող ոտանավոր կամ հանելուկ, մուլտֆիլմ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ նկարչական պարագաներ, հիգիենայի պարագաներ:

ՆՊԱՏԱԿԸ. պարապմունքի նպատակն է՝ կերպարվեստի միջոցով զարգացնել երեխայի բարոյական որակները, գունազգացողությունը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Երեխաներին ծանոթացնել հեքիաթի բովանդակությանը, հեղինակին,
2. ծաղկի պատկերման եղանակներին,
3. ընդլայնել երեխաների բարոյական որակները,
4. փոխանցել գիտելիքներ գույների և դրանց երանգների վերաբերյալ:

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴ ՆԵՐ.

Դիտման, զննման, ցուցադրման, խոսքային, վերլուծության, հարց ու պատասխանի, համագործակցության մեթոդները:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ.

1. պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը երեխաների հետ զրույց է անցկացնում (3-5 րոպե),
2. նրանց հարցնում է, թե ինչ գիտեն ծաղիկները մասին,
3. ցույց է տալիս ծաղիկների նկարներ,
4. տեղեկություններ է տալիս նրանց մասին՝ թե ինչպիսի ծաղիկներ են լինում,

5. ծաղկի հատկանիշները բնութագրող հանելուկ կամ բանաստեղծություն է ընթերցում,
6. ցույց է տալիս նախապես պատրաստված ծաղիկը,
7. այնուհետև սկսում է բացատրել ծաղիկների նկարելու եղանակը, որ նկարելիս պետք է ամեն ինչ համաչափ և կոկիկ լինի:

ԸՆԹԱՑՔԸ. պարապմունքը սկսվում է <<Յոթնագույն ծաղիկ>> հեքիաթի ընթերցանությամբ: Ընթերցելուց հետո հարց ու պատասխանի միջոցավ ծանոթացնում ենք հեքիաթի սյուժեին: Երեխաների ուշադրությունը հրավիրվում է հեքիաթի այն հատվածի վրա, երբ աղջկա ձեռքին գտնվող յոթնագույն ծաղկի թերթիկներից մեկ հատ էր մնացել: Աղջիկը բոլոր թերթիկները անիմաստ օգտագործել էր, բայց վերջին թերթիկով բարի գործ էր կատարել՝ օգնել էր հաշմանդամ մի նտղայի, որը հետագայում դարձել էր իր ամենամտերիմ ընկերը:

ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե). Նկարելուց հետո վերլուծվում է յուրաքանչյուր երեխայի նկարը և միասին գալիս են այն եզրահանգման, որ եթե բոլորը իրենց ծաղկի վերջին թերթիկով բարի գործեր անեն, ապա աշխարհում կտիրի բարություն և ոչ ոք չի տխրի: Աշխատանքը անվանվեց <<բարություն>>: Այս աշխատանքի միջոցով երեխաների մեջ առաջացրինք հոգատար վերաբերմունք հաշմանդամների և ընկերների նկատմամբ: Երեխաների մեջ առաջանում էք բարի գործ կատարելու ցանկությունը: Միաժամանակ ամրապնդվում է <<7>> գույների և նրբերանգների իմացությունը:

Երեխաների մոտ, ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից, գերակշռում է իրազննական-գործնական մտածողությունը և աշխարհի զգայական ընկալումը, այդ պատճառով նրանց համար կարևոր է խաղի վրա հիմնված ակտիվությունը, ինչին շատ լավ համապատասխանում են արվեստի տարբեր բնագավառների (նկարչություն, երաժշտություն) ուսանման յուրահատկությունները:

Մանկապարտեզում արվեստի դասավանդումը հիմնականում ծառայում է երեխայի զգայական և մտավոր ոլորտի, աշխատանքային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Կերպարվեստի արվեստի դասավանդումը, ուսումնական պլանի համաձայն, ծավալվում է երեք ուղղությամբ.

1. ստեղծագործական հմտությունների զարգացում,
2. հաղորդակցություն և մեկնաբանություն,
3. արվեստի ընկալում համատեքստում:

Դասավանդումը բոլոր ուղղությունների շրջանակներում ընթանում է զուգահեռաբար և միմյանց հետ սերտ փոխադարձ կապի մեջ:

Կերպարվեստը լինելով մարդկային ստեղծագործությունների միասնություն, համարվում է նաև հասարակության գիտակցության ձևերից մեկը: Այն իրականության արտացոլումն է, գեղագիտորոն, գեղարվեստական կերպարի միջոցով: Այն ստեղծվում է մտքի և միջավայրի համադրումից: Արվեստն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը:

Սկզբնավորվելով դեռևս մարդու աշխատանքային գործունեությունից սկսած՝ արվեստը բարենպաստ ազդեցություն է ունեցել մարդու զարգացման վրա, հատկապես նրա գեղագիտական պատկերացումների ընդարձակման վրա:

Այսօր շատ կարևոր պայման է դաստիարակության այս տեսակը՝ գեղագիտական դաստիարակությունը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման մեջ, այն փոխկապակցված է բոլոր դաստիարակության տեսակների հետ, այդ իսկ պատճառով այն պետք է դասավանդել ճիշտ և գրագետ, որպեսզի մարդը արվեստի շնորհիվ ստանա գեղագիտական դաստիարակություն:

Արվեստը դա անձի կողմից արտահայտվելու մի յուրահատուկ ձև է, որի միջոցով նա արտահայտում է այն ինչ զգում է և տեսնում է, հետևաբար սավածը ևս ապացույցն է այն բանի, որ արվեստը դա գեղագիտական դաստիարակության կևևոր խթանն է:

Արվեստն՝ ընդհանրապես և կերպարվեստը՝ հատկապես, իրենց մեջ խտացնելով շրջապատող իրականության ամենատարբեր երևույթները, այդ թվում <<մարդ-շրջապատող առարկայական աշխարհ>> բազմաբնույթ փոխհարաբերությունները, իրենց վրա են ստանձնում անձի կրթության և դաստիարակության առանցքային դերը:

Իր յուրահատկության և բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, <<Կերպարվեստը>> կոչված է խթանելու երեխաների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Նախադպրոցական կրթական հաստատություններում երեխայի կերպարվեստային գործունեության տեսակներն են՝ ներառական, բնօրինակից, թեմատիկ, ազատ ստեղծագործական բնույթի, հիշողությամբ, զրույց արվեստի թեմաներով պարապմունքները, որոնց ընթացքում երեխաները ստանում են ինչպես տեսական գիտելիքներ գեղարվեստական գործունեության վերաբերյալ, այնպես էլ ձեռք են բերում նկարելու, ծեփակերտելու, դեկորատիվ աշխատանքներ կատարելու, ինքնուրույն ստեղծագործական հորինվածքներ ստեղծելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ:

1. **Գեղանկարչություն կամ գունանկարչություն (երփնագիր)** - Կերպարվեստի տեսակ: Գեղանկարչությունը մարդկային աշխատանքի զարգացած ձևերից մեկն է և առարկայական, գեղագիտական արժեքների ստեղծման ոլորտ: Ինչպես և արվեստի մյուս տեսակները, գեղանկարչությունը ճանաչողական և գաղափարական խնդիր է իրագործում, ստեղծում մարդու, բնության, առարկաների, պատմական և հասարակական երևույթների գեղրարվեստական պատկերները: Գեղանկարչության բազմաթիվ ստեղծագործություններ ունեն փաստաինֆորմացիոն արժեք:
2. **Գծանկար կամ գրաֆիկա-** Գծանկարը գրաֆիկայի տեսակ է, նաև հիմք է նկարչական արվեստի բոլոր տեսակների համար: Գծանկարը կարող է հանդես գալ ինչպես վերջնական ստեղծագործություն, այնպես էլ տեխնիկական բազա հանդիսանալ գեղարվեստական ստեղծագործությունների համար: Այդ իսկ պատճառով գծանկարը, խորապես ուսումնասիրվում է նկարիչների, քանդակագործների և ճարտարապետների կողմից:
3. **Քանդակագործություն-** Քանդակագործությունը պլաստիկ արվեստներից մեկն է, կերպարվեստի տեսակ, որ պատկերումները կատարում է ծավալային եռաչափ մարմնավորումներով: Որպես կանոն քանդակագործությունը պատկերում է մարդուն, սակավ՝ կենդանիներին (անիմալիստական ժանր), ավելի սակավ՝ բնությունը (բնապատկեր), և առարկաներ (նատյուրմորտ): Գեղանկարչության ու գրաֆիկայի համեմատ ունենալով գեղարվեստաարտահայտչական ավելի սահմանափակ միջոցներ՝ քանդակագործությունը միևնույն ժամանակ ստեղծում է

ծավալների շոշափելի ու իրականակերպ դրսևորումներ և դիտողին հնարավորություն է տալիս պատկերվածն ընկալելու տարբեր դիտակետերից:

4. **Դեկորատիվ կիրառական արվեստ-** Դեկորատիվ արվեստի ճյուղը ընդգրկում է ստեղծագործական այն բնագավառները, որում ստեղծվում են գեղարվեստական կենցաղային իրեր (կահույքի, գործվածքի, աշխատանքի գործիք, ինչպես նաև զգեստ, զարդ):
5. **Կառուցողական արվեստ կամ արխիտեկտոնիկա-** ճարտարապետության մեջ կառուցողական արվեստի գլխավոր սկզբունքը, շինության, նաև դեկորատիվ արվեստի ծավալային ստեղծագործություն կոնստրակտիվ համակարգին հատուկ կառուցվածքային օրինաչափությունների գեղարվեստական արտահայտությունը:

Արխիտեկտոնիկան դրսևորվում է կրող և կրվող մասերի փոխադարձ կապի և փոխդասավորվածության միջոցով:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է.

1. իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը[5].
2. վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը,
3. անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը,
4. սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը,
5. ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների, բնապաշտության արմատավորմանը:

Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը: Սակայն արդի ժամանակներում այն կարծես անուշադրության է մատնվում, հետին պլան է մղվում ու գնալով նվազում է:

Գեղագիտական դաստիարակության իրականացումը դպրոցական հանրակրթության համակարգում իրականացվում է պետական ծրագրի միջոցով:

Ծրագիրը սահմանում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության դերը պետական մշակութային քաղաքականության մեջ,

[5]Հակոբյան Հ. Հ.,Կերպարվեստ հայոց կրթարաններում: Երևան, «Գիտություն» 1996, էջ 54:

համակարգի ռազմավարական ուղղությունները, զարգացման միտումները, նպատակներն ու խնդիրները, ներկայացնում է բովանդակությունն ու մեթոդաբանությունը:

Գեղագիտական դաստիարակություն՝ գեղեցիկը ընկալելու, զգալու, գնահատելու և գեղագիտական արժեքներ ստեղծելու ստեղծագործական անհատի ձևավորմանը նպատակաուղղված գործընթաց: Այսպիսի սահմանումը վերաբերում է՝ հասուն անհատին, մինչդեռ երեխաները նույնպես ընդունակ են արձագանքելու շրջապատող միջավայրի գեղեցկությանը, բնությանը, երաժշտությանը՝ ձգտելով ստեղծագործել՝ երգել, պարել, նկարել և այլն:

Մանկապարտեզում գեղագիտական դաստիարակության խնդիրները հիմնականում լուծված են, սակայն բացակայում են ուսուցման ուղղությունների համապատասխան մասնագիտական ձեռնարկներն ու մեթոդական ուղեցույցները:

Նախադպրոցականի գունազգացողության ձևավորման գործընթացում կերպարվեստի նպատակներն են.

1. Օգնել երեխաներին ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը՝ ձևավորելով տրամաբանական մտածողություն, ինչպես նաև տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունք:
2. Բացահայտել մարդկանց կյանքում ստեղծագործական աշխատանքի նշանակությունը:
3. Տալ աշխարհի գեղագիտական ընկալման ճիշտ ուղղվածություն:
4. Զարգացնել տարածական մտածողություն, պատկերային երևակայություն:
5. Երեխաներին ծանոթացնել ազգային մշակույթի ստեղծագործություններին:
6. Գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ սերմանել հետաքրքրություն և սեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը, ինչը հանդիսանում է նախադպրոցականի կրթության հիմնական նպատակը, անհնար է առանց արվեստի հետ նրա հաղորդակցության: Արվեստի տարբեր բնագավառների ուսումնասիրությունը նրբացնում է նրա ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու ցանկացած գործունեություն:
- Անձի դաստիարակության-զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային գործունեությունը, նոր ուսումնական պլանի համաձայն, ինտեգրված է արվեստի ուսուցման հետ: Այս ինտեգրման հիմք է հանդիսանում կերպարվեստի ուսուցման մեջ կիրառական-դեկորատիվ արվեստի տարրերի ընդգրկումը: Առարկան դասավանդելիս՝ ուշադրությունը կենտրոնանում է տրամադրվածությունների, վերաբերմունքների, գործնական, ստեղծագործական և հետազոտական-որոնման կարողությունների և հմտությունների զարգացման և գիտելիքի կիրառման վրա:
- Կերպարվեստը լինելով մարդկային ստեղծագործությունների միասնություն, համարվում է նաև հասարակության գիտակցության ձևերից մեկը: Այն իրականության արտացոլումն է, գեղագիտորոն, գեղարվեստական կերպարի միջոցով: Այն ստեղծվում է մտքի և միջավայրի համադրումից: Արվեստն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը:
- Սկզբնավորվելով դեռևս մարդու աշխատանքային գործունեությունից սկսած՝ արվեստը բարենպաստ ազդեցություն է ունեցել մարդու զարգացման

վրա, հատկապես նրա գեղագիտական պատկերացումների ընդարձակման վրա:

- Այսօր շատ կարևոր պայման է դաստիարակության այս տեսակը՝ գեղագիտական դաստիարակությունը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման մեջ, այն փոխկապակցված է բոլոր դաստիարակության տեսակների հետ, այդ իսկ պատճառով այն պետք է դասավանդել ճիշտ և գրագետ, որպեսզի մարդը արվեստի շնորհիվ ստանա գեղագիտական դաստիարակություն:
- Արվեստը դա անձի կողմից արտահայտվելու մի յուրահատուկ ձև է, որի միջոցով նա արտահայտում է այն ինչ զգում է և տեսնում է, հետևաբար սավածը ևս ապացույցն է այն բանի, որ արվեստը դա գեղագիտական դաստիարակության կևևոր խթանն է:
- Արվեստն՝ ընդհանրապես և կերպարվեստը՝ հատկապես, իրենց մեջ խտացնելով շրջապատող իրականության ամենատարբեր երևույթները, այդ թվում <<մարդ-շրջապատող առարկայական աշխարհ>> բազմաբնույթ փոխհարաբերությունները, իրենց վրա են ստանձնում անձի կրթության և դաստիարակության առանցքային դերը:
- Իր յուրահատկության և բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, <<Կերպարվեստը>> կոչված է խթանելու երեխաների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հակոբյան Հ. Հ.,Կերպարվեստ հայոց կրթարաններում: Երևան, «Գիտություն» 1996թ.:
2. Ներսիսյան Լ. Ս., Ներսիսյան Ս. Մ., «Կերպարվեստ» օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար՝ 1-4 դաս., Երևան, 2008թ.: